

ՅԱՂԹԱԿԱՆ ՄՈՒՏՔ

Եւ Մաշտոցի հետ երբ եկան,
 406 ոսկի թուին՝
 Երբ հայերէն տառերն եկան
 Վաղարշապատ,
 Կարծես յանկարծ
 Հայաստանեայց
 Աշխարհին վրայ շուշան - շուշան
 Թափթփեցան
 Լոյս երամներ՝
 Աղանիի աւետաբեր:
 Ու թառեցան
 Անոնք ամէն սիրտ ու երդի
 Ու գմբէթի,
 Եւ շինեցին
 Ոսկեհիւս բոյն Մշակոյթի:

Եւ երբ մտան Ոստանն հայոց,
 Տառերն այս նոր ու հայագոծ՝
 Ամէն յարկի տակ վառեցին
 Հայ մատեանի թոնիր մ'անշէջ.
 Զարերն որոնք կային շատոնց՝
 Չունէին բոց.
 - Ի՞նչպէս եփէր
 Իմացական հացը Հայուն,
 Երբ փուռին մէջ չկար կրակ:
 Զանգակատունն ի՞նչպէս կանչէր
 Ու կարկաչէր՝
 Հայ զանգը երբ չունէր լեզուակ:
 Ի՞նչպէս բուրէր հայոց ածուն,
 Երբ հող կար՝ բայց չկար շափրակ:

Բայց երբ մտան հայ հողէն ներս
 Տառերը հայ,
 Հայ դպրոցներ բռնկեցան
 Հուրով մը վեհ,
 Եւ հայ գիրքի եղաւ հրդեհ՝

Ու հայկակի միտքեր դարձան
 Անոր ճարակ:
 Օ՛ր, մէկ-մէկ ջա՛հ եղան հայկակ
 Ու հայկունհի,
 Եւ Հայուն հողը դարձուցին
 Տաճար լոյսի...:

Գմբէթներուն տակ հայկական,
 Հայոց լեզուն զանգակատուն՝
 Լեզուակի պէս ա՛լ թնդացուց
 Հայու սաղմոս ու շարական,
 Մինչ մշակեալ ծաղկաստանի
 Մը կը փոխուէր
 Անգոյ ածուն հայ դպրութեան:
 Եւ գիրերուն հետ հայերէն՝
 Կարծես ամէն
 Հայ տունէ ներս
 Մտնէր նոյն ինքն
 Մեսրոպ Մաշտոցը սլացիկ
 Ու վեհափառ՝
 Իբր Ամենայն Հայերու Պապ
 Եւ իր սրտէն բաժակածեւ
 Պարպէր բարեւ՝
 Որպէս գինի,
 Բաշխէր արեւ՝
 Որպէս ոսկի:

Եւ ան մտնէր կարծես նաեւ
 Իբր Ամենայն Հայոց Արքայ՝
 Ու տար ընծայ.
 Ինչե՛ր չտար՝
 Որ դարերով չեն սպառիր,
 Որ բառերով՝ ալ չեն ճառուիր:

Եւ ան մտնէր դեռ հոն ու հոս
 Իբր Ամենայն Հայոց Հերոս՝
 Ռազմէն յաղթո՛ղ դարձողի պէս,
 Եւ իր գոգէն՝ ծաղիկ որպէս՝
 Մէն մի հայու իր սի՛րտը տար,
 Սիրտն անսպառ
 Ու սիրահար...: